№ 83 Շաբաթ Յուլիսի 26 — 1886 — Շաբաթ Յուլիսի 26 № 83

ՏԱՍՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։ Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ». Կամ. Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Այր և կին մարդկանց աշխատութիւնը. Նամակ Բագուից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գերմանիա. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գաւառական նամակներ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՑՐ ԵՒ ԿԻՆ ՄԱՐԴԿԱՆՑ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԸ *)

Իրաքանչիւր մարդու կոչումը, թէ այր թէ կին մարդու, նրա մէջն է կայանում, որ ծառայի մարդկանց։ Այս ընդհանուր դրութեան հետ, ես կարծում եմ, համաձայն են բոլոր այն մարդիկ, որոնք անքարոյական չեն։ Իրանց կոչման հաւատարիմ մնալու համար այր և կին մարդկանց տարբերութիւնը միայն այն միջոցների մէջն է, որոնցով նրան հասնում են, այսինքն, որոնցով նրանք ծառայում են մարդկանց։

Տղամարդը ծառայում է մարդկանց և ֆիզիքական աշխատութեամբ—հայթայթելով ապրուստի միջոցներ, և մտաւոր աշխատութեամբ—ուսումնասիրելով բնութեան օրէնքները՝ նրան յաղթելու համար, և հասարակական աշխատութեամբ—սահմանելով կեանքի վերաբերեալ ձևերը, հաստատելով մարդկանց մէջ յարաբերութեանց եղանակը։ Մարդկանց ծառայելու միջոցները այր մարդու համար բազմատեսակ են շատ։ Մարդկութեան բոլոր գործունէութիւնը, բացի սրդեծնութիւնը և մնդելը, կազմում է նրա ասպարէզը՝ մարդկանց ծառայելու համար։ Իսկ կինը, ինչպէս և այր մարդը, այս բոլորով մարդկանց ծառայելու համար՝ իր կարողութիւնից զատ, իր դոյութեան յատուկ կողմերով, իր կազմութեամբ կոչված, հակված է դէպի այն ծառայութիւնը, որը միակ դուրս է ձգված այր մարդու ծառայութեան շրջանից։

Մարդկութեան ծառայելը ինքն ըստ ինքեան բաժանվում է երկու մասի. մէկը—որ մեծացնում է երջանկութիւն գոյութիւն ունեցող մարդկութեան մէջ, միւսը—որ շարունակում, պահպանում է նոյն իսկ մարդկութիւնը։ Առաջնի համար կոչված են առաւելապէս այր մարդիկ, քանի որ նրանք երկրորդին ծառայելու կարողութիւնից զրկված են։ Երկրորդի համար կոչված են առաւելապէս կանայք, քանի որ բացառապէս նրանք միայն ընդունակ են այդ բանին։ Այս զանազանութիւնը չէ կարելի, չը պէտք է և մեղք է (այսինքն սխալ է) չը յիշել և չնչել։ Այս զանազանութիւնից են ծագում մէկի և միւսի պարտաւորութիւնները, պարտաւորութիւններ, որ մարդկանց հնարածը չեն, այլ որ դրված են իրերի բնաւորութեան մէջ։ Հենց այդ տարբերութիւնիցն էլ յառաջանում է այր և կին մարդու յանցանքի և առաքինութեան գնահատութիւնը—գնահատութիւն, որ գոյութիւն է ունեցել բոլոր դարերում, որ գոյութիւն ունի և այժմ, որ երբէք չը պէտք է դադարի գոյութիւն ունենալուց, քանի որ մարդկանց մէջ եղել է, կայ և կը լինի բանականութիւն։

Միշտ եղել է և կը լինի այն, որ այր մարդը, իր կեանքի մեծ մասը գործ դնելով իրան յատուկ բազմատեսակ ֆիզիքական, մտաւորական և հասարակական աշխատութեան մէջ, և կինը, անցկացնելով իր կենաց մեծ մասը իրան յատուկ բացառիկ աշխատութեան մէջ՝ ծնելով, կերակրելով և մեծացնելով զաւակներին, պէտք է միակերպ զգան, որ կատարում են այն ինչ որ պէտք է, և միակերպ յարգանք և սէր պէտք է վայելեն ուրիշներից, որովհետև երկոքեան կատարում են այն, ինչ նախասահմանված է նոցա իրանց բնածին յատկութեամբ։

Այր մարդու կոչումը բազմակողմանի և լայն է, կնոջ կոչումը միօրինակ և նեղ է, բայց աւելի խոր, և հէնց այդ պատճառով միշտ համարուած է և պիտի համարվի, որ այր մարդը, ունենալով հարիւրաւոր պարտաւորութիւններ, եթէ դաւաճանում է նրանցից մէկին կամ տասին, դըրանով նա ոչ վատ է դառնում և ոչ վնասակար, կատարելով իր պարտաւորութեանց մեծ մասը։ Իսկ կինը, թուով քիչ պարտաւորութիւններ ունենալով, եթէ դաւաճանում է մէկին, իսկոյն բարոյապէս ընկնում է ցած, չատ աւելի, քան իր հարիւրաւոր պարտաւորութիւնից տասին դաւաճանող այր մարդը։ Այսպէս է եղել միշտ ընդհանուր կարծիքը, և այսպէս էլ պիտի լինի միշտ, քանի որ այսպէս է գործի իսկութիւնը։

Այր մարդը Աստուծոյ կամքը կատարելու համար պէտք է ծառայի նրան և ֆիզիքական աշխատութեան շրջանում, և մտքի, և բարոյականութեան,—նա այդ բոլոր գործերով կարող է կատարել իր պարտքը։ Կնոջ համար Աստուծուն ծառայելու միջոցները առաւելապէս և համարեա բացառապէս (որովհետև նրանից զատ ոչ ոք այդ չէ կարող կատարել)—զաւակներն են։ Միայն իր գործերով ծառայելու Աստուծուն և մարդկանց կոչված է այր մարդը, միայն իր զաւակներով ծառայելու կոչված է կինը։

Ուստի և սէրը դէպի իր զաւակները, որ ներշնչված է կնոջ, եղական մի սէր է, որի հետ իզուր է բանականութեամբ կռւել, որը միշտ կը լինի և պէտք է լինի յատուկ կին—մօրը։ Մանկութեան հասակում դէպի երեխան ցոյց տուած այդ սէրը ամենևին եսականութիւն չէ, այլ այդ մշակի կողմից դէպի իր գործը ցոյց տուած սէրն է, այն ժամանակ, երբ այդ նրա ձեռքումն է։ Խլեցէք այդ սէրը, որ ունի նա դէպի իր աշխատութեան առարկան և անկարելի է աշխատութիւնը։ Երբ ես կօշիկ եմ պատրաստում, ես նրան ամենից առաւել եմ սիրում։ Եթէ ես նրան չը սիրէի, նրան չէի էլ կարող պատրաստել։ Կը փչացնեն նրան, ես պիտի յուսահատվեմ, բայց ես նրան սիրում եմ մինչև այն ժամանակ, երբ վերան աշխատում եմ։ Երբ հէնց աշխատութիւնս աւարտեցի՝ մնում է մի թոյլ և անբնական սէր և նախապատութիւն։

Մի և նոյնը կարելի է ասել և մօր մասին։ Այր մարդը կոչված է ծառայելու մարդկանց բազմատեսակ աշխատութիւնների միջոցով և նա սիրում է այդ աշխատութիւնը, քանի որ զբաղված է նրանով։ Կինը կոչված է ծառայելու մարդկանց իր զաւակներով, և նա չէ կարող չը սիրել այդ իր զաւակներին, երբ նա զբաղված է նրանց 3, 7, 10 տարեկան դարձնելով։

Աստուծուն և մարդկանց ծառայելու ընդհանուր կոչմամբ այր և կին միանդամայն հաւասար են, չը նայելով այդ ծառայութեան տարբեր եղանակին։ Հաւասարութիւնը նրա մէջն է, որ մէկ ծառայութիւնը այնքան կարևոր է որքան և միւսը, որ մէկը առանց միւսի միտք չունի, որ մէկը պայմանաւորում է միւսին և որ իսկական ծառայութեան համար, ինչպէս այր մարդուն, այնպէս և կնոջ, հաւասարապէս անհրաժեշտ է գիտենալ ճշմարտութիւնը, առանց որոյ, ինչպէս և կին մարդու գործունէութիւնը չէ թէ օգտակար, այլ վնասակար է դառնում մարդկութեան համար։ Այր մարդը կոչված է կատարելու իր բազմատեսակ աշխատութիւնը, իսկ նրա աշխատութիւնը միայն այն ժամանակ օգտակար է և նրա վաստակը, և ֆիզիքական, և մտաւորական, և հասարակական՝ այն ժամանակն է պտղաբեր, երբ կատարվում են յանուն ճշմարտութեան և այլոց երջանկութեան։ Որքան էլ եռանդով չը պարապէր այր մարդը իր օգտին՝ թէ իր բաւականութիւնների մեծացնելով, թէ ունայն մտածութիւններով, թէ հասարակական գործունէութեամբ, նրա աշխատութիւնը արդիւնաւոր լինել չի կարող։ Նա արդիւնաւոր կը լինի միայն այն ժամանակ, երբ ուղղված կը լինի դէպի այն նպատակը, որ թեթևացնի մարդկանց տառապանքը կարիքներից, տգիտութիւնից և հասարակական սխալ կազմակերպութիւնից։

Մի և նոյն կոչումն ունի և կինը. նրա ծնունդը, մնդելը, մեծացնելը երեխայոց միայն այն ժամանակ օգտակար կը լինի մարդկութեան, երբ նա կը մեծացնի զաւակներ ոչ թէ լոկ իր ուրախութեան համար՝ այլ մարդկութեան ապագայ ծառաներ լինելու համար, երբ այդ երեխայոց կրթութիւնը կը կատարվի յանուն ճշմարտութեան և երջանկութեան մարդկանց, այսինքն, կը կրթէ նա երեխայոց այնպէս, որ նրանք լինեն միւս մարդկանց համար լաւագոյն մարդիկը և մշակները։

Ըստ իս գաղափարական կինը կը լինի նա, որ իւրացնելով իր ժամանակի բարձր աշխարհահայացքը, կը նուիրի իրան իր կանացի, անյաղթելի սիրով։

*) Լ. Ն. Տոլստոյի մամնաւոր նամակից՝ որ տպագրված է նրա համաձայնութեամբ, «Русское Богатство» ամսագրի 1886 թ. № 5—6 մէջ։ «Մշակի» խմբագրութիւնը հետևեալ համարներից մինում կը յայտնի իր կարծիքը կոմս Տոլստոյի այդ միակողմանի և յետադէմ կարծիքի մասին։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԱԻԱՌԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

II.

«Alles war gesagt, doch alles bleibt zu sagen».
Göthe

—

Մեր նախընթաց յօդուածում մի հարևանցի հայեացք ձգելով հողատիրութեան սիստեմայի վրա հայաբնակ գաւառներում, տեսանք որ հողի արդիւնաբերութիւնը մեր երկրում ընկած լինելով, գիւղացին ստիպված է եթէ ոչ ամբողջապէս, իր հողերի գէթ մի մասը վաճառել իր պէտքերը հոգալու համար, գոյութեան կռւի ասպարիզում չընկնելու համար։

1883 թուականին պետական կալուածների մինիստրութիւնը մի յանձնաժողով կազմակերպեց պետական գիւղացիների տնտեսական դրութիւնը Անդրկովկասում ուսումնասիրելու համար։ Այդ յանձնաժողովի խնամքով ժողված և մի մասը արդէն հրատարակված տեղեկութիւններին նայելով կը տեսնենք, որ հողատիրութիւնը Անդրկովկասում ընդհանրապէս և Քութայիսի նահանգում մասնաւորապէս սկսում է այնքան մանրանալ, որ հնարաւորութիւն չունենալով գոյութիւն ունենալ՝ անհետանում, կորչում է ձուլվելով միւսների հետ և այդպիսով փոքր առ փոքր կազմակերպվում է խոշոր հողատիրութիւնը, իսկ նրա հետ միասին և գիւղական պրոլետարիատը, մարդկութեան այդ մրրկալից տարրը, որ, ինչպէս տեսնում ենք, միշտ ալէկոծման մէջն է պահում արևմուտքը։

Մեր առաջին յօդուածում ասացինք, որ Անդրկովկասի հայաբնակ գաւառը, ինչպէս յայտնի է, երկրագործական երկիր լինելով, հողը առաջին տեղն է բռնում ժողովրդական կեանքում։ Իսկ եթէ դա այդպէս է, եթէ ժողովրդական տնտեսութեան գլխաւոր աղբիւրը հողն է, ուստի հողային հարցից յետոյ երկրորդ ամենակարևոր հարցը, որպէս կցորդ առաջինի, ջրայինն է (ирригація)։

Ջրային հարցը Անդրկովկասում, նամանաւանդ այդ երկրի արևելեան մասում, այնքան մեծ նշանակութիւն ունի ժողովրդի տնտեսական կեանքում, որ հողային հարցի հետ միասին միայն կարելի է ասել, կազմում են տեղական ժողովրդի գոյութեան հիմքը։ Մեր անցեալ յօդուածում խօսելով հողային հարցի մասին մեր երկրում, ասեցինք, որ մեր գրականութիւնը գրեթէ անուշադիր է դէպի այդ հարցը. գալով այժմ ջրային հարցին պէտք է ասենք, որ շատ քչերի ուշադրութեան է արժանացել այդ հարցը և մեր տեղական գրականութեան մէջ գրեթէ ոչ մի աչքի ընկնող աշխատութիւն չունենք այդ հարցին վերաբերեալ, եթէ չը հաշուենք Վիկտոր Դինգելշտետի «Водовладѣніе и Ирригація въ Закавказьи» տեղական ռուս թերթերից մէկում տպված մի շարք յօդուածները, որ այժմ առանձին գրքերով են լոյս տեսել։

Մեր նպատակը չէ, ի հարկէ, լրացնել այստեղ մեր գրականութեան այդ պակասի գէթ մի մասը. ջրային հարցը այնպիսի բուն մասնագիտական մի հարց է, որ լրագրական սիւնակները գուցէ անյարմար էլ լինեն նրա համար և, որ ամենից գլխաւորն է, այդ հարցը այնքան մանուկ է մեր գրականութեան մէջ, այդ հարցի մասին այնքան քիչ գրաւոր տեղեկութիւններ ունենք, որ մենք չենք կարող մեզ կոմպետենտ համարել այդ հարցում։ Մեր այդ յօդուածի նպատակն է մեր երկրի ջրային հարցի այժմեան ընդհանուր դրութիւնը միայն ներկայացնել ընթերցողին, չօշափել այդ հարցը ընդհանրապէս և եթէ դրանով կաջողվի մեզ մի թեթև գաղափար տալ ընթերցողին մեզ հետաքրքրող հարցի մասին, մենք մեր նպատակին հասած կը համարենք մեզ։

—

Ջրի տիրապետութիւնը և ջրից օգտվելու եղանակը, ինչպէս և հողատիրութիւնը այնքան բազմաթիւ ձևեր ունի Անդրկովկասում, որ մէկ, կամ երկու գաւառի, նոյն իսկ նահանգի ջրի տիրապետութեան նկարագրութիւնը երբէք չէ կարող տալ մեզ ջրի տիրապետութեան ու նրանից օգտվելու եղանակի մի ամբողջ պատկեր։ Գիւղական կեանքի ոչ մի հարց, կարծեմ, այնպէս կնճռված, անորոշ չէ, ինչպէս ջրային հարցը և ոչ մէկը կարծեմ այնպիսի ուսումնասիրութեան ու կանոնաւորութեան կարօտ չէ, ինչպէս դա։

Ջրի տիրապետութիւնը մեր երկրում, ինչպէս և հողատիրութիւնն, համայնական է։ Վերառնենք, օրինակ, Երասխի հովիտը։ Ամեն մի գիւղական հասարակութիւն ունի իր սեփական առու, որը համայնքի հաշուով, անց է կացրած Երասխից դէպի այդ գիւղը։ Այդ առուն, նրա գիւղերի հետ միասին, ամեն գարնան սկզբին մաքրվում է նոյն համայնքի ոյժերով։ Գիւղական հասարակութիւնը ջրից օգտվելու համար, իր միջից ընտրված ներկայացուցիչների միջոցով, բաժանվում է մասերի, խմբերի, որ մի քանի գաւառներում բօլիւք են անուանում, մի քանիսումն էլ համբա։ Բօլիւքը կամ համբան բաղկացած է լինում 4—10 ընտանիքից։ Մի քանի համբայք, որոնց արտերը անպատճառ պէտք է իրար կից լինեն, իրանց ցանքերը ջրելու համար 24 ժամվայ ընթացքում ջուր է տրվում։ Այդ 24 ժամվայ ընթացքում բօլիւքի ամեն մի անդամ պէտք է աշխատի բաւականաչափ ջրելու իր արտը, որովհետև միւս օրը հերթը միւս խմբին պատկանելով, նրա ցանքին վտանգ է սպառնում, արտը կարող է չորանալ։ Ջրից օգտվելու սիստեմը, կերպը հայաբնակ գաւառներում գրեթէ ամեն տեղ այդ բնաւորութիւնը ունի, բայց ամեն մի գաւառ ջրի տիրապետութեան այդ ընդհանուր սիստեմին, եղանակին աւելացնում է, ի հարկէ, և իր առանձնութիւնները։ Բայց կան և այնպիսի գաւառներ, ուր ջրի տիրապետութեան այդ համայնական ձևը այնքան փոփոխվում է, ժողովուրդը տեղական պայմաններին յարմարվելով այնքան փոփոխութիւններ է անում ջրից օգտվելու եղանակի մէջ, որ այդ գաւառը այդ կէտից մի առանձին հետաքրքիր երևոյթ է ներկայացնում և մենք, որպէս օրինակ, կը նկարագրենք այստեղ Երևանի գաւառի Վեդի-բասար հովտում գործածվող ջրից օգտվելու ձևը։

Վեդի-բասարի մահալի գիւղական հասարակութիւնը ջրի մեծ հարկաւորութիւն ունի և այդ կարելի է եզրակացնել նրանից հէնց, որ մօտ 20 գիւղ ընդամենը երկու ջրաղաց ունեն։ Ջրի պակասութիւնը այդ գաւառում ստիպում է գիւղացիներին մի առանձին խնամքով վերաբերվել դէպի ջուրը և առաջ է բերել ջրից օգտվելու ժամանակամիջոցների որոշելու մի առանձին սիս-

թելի կերպով իր մէջ ներշնչված կոչման՝ ծնել, սնուցել և կրթել ամենամեծ քանակութեամբ երեխաներ, որոնք ընդունակ լինեն աշխատելու—յօգուտ մարդկանց՝ իր սեպհականացրած աշխարհահայեցողութեան համեմատ։

Իսկ բարձր աշխարհայեցողութիւնը իրագործելու համար կարծեմ որ հարկ չը կայ ուսման բարձր դասընթացքները (կուրսերը) յաճախելու, այլ միայն հարկաւոր է կարդալ Աւետարանը և չը փակել աչքերը, ականջները և, որ գլխաւորն է, սիրտը։

Իսկ այժմ նոքա, որոնք անզաւակ են, մարդու չեն գնացել. այրիները։ Նրանք չատ լաւ կանէին եթէ մասնակցէին այր մարդու բազմատեսակ աշխատութիւնների մէջ։ Բայց չէ կարելի չը ցաւել այն մասին, որ մի այդպիսի թանկագին գործիք, ինչպէս կինն է, զրկված է միայն իրան յատուկ բարձր կոչումն կատարելու կարողութիւնից։

Իսկ առաւել, որ իրաքանչիւր կին, ծնունդից յետոյ, եթէ ունի ոյժ, կարող է նպաստել մարդուն այդ աշխատութեան մէջ։ Կնոջ օգնութիւնը այդ աշխատութեան մէջ չատ թանկագին է, բայց տեսնել մատաղ կնոջ, որ պատրաստ է որդեծնութեան, և պարապված է առնացի աշխատութեամբ, միշտ ցաւալի է։ Տեսնել մի այդպիսի կին, մի և նոյն է թէ տեսնել թանկագին սնահողը ծածկված քարերի բեկորներով՝ զորքի կըրթութեան համար մի վայր կամ ճեմելիք դարձած լինելով։ Դեռ առաւել ցաւալի, որովհետև այդ հողը կարող էր միայն ցորեն բացնել, իսկ կինը կարող էր բացնել այն, որը գին չունի, որից աւելի բարձր չը կայ ոչինչ—մարդ։ Եւ միայն նա կարող էր այդ անել։

Ց. Խ.

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

Ցուլիսի 20-ին

Բագուի մէջ գտնվող պ. Շահգեղամեանցի գործարանը գերազանց է քան միւսները և աւելի չատ է ստանում քան միւսները։ Բայց այդ այդպէս լինելով, մարդը զարմանում է թէ ինչու այդ գործարանի տերը բանուորների երեք ամսվայ վճարը պահում է, կամ ինչու բանուորների աշխատութեան ժամերի թիւը աւելացնում է։ Նրա գործարանի գերազանց լինելը և առաւել չատ ստանալը միթէ արդարացնում է նրա վարմունքը։

Մենք հաստատ աղբիւրներից գիտենք, ինչպէս նաև չատերը, որ Շահգեղամեանի հարստութիւնը կայանում է ոչ միայն սեպհական տների և կալուածների, այլ գլխաւորապէս զուտ փողի մէջ։ Բայց ինչու բանուորների փողը պահում է.—ահա ինչու. այն պատուէրները, որոնց համար մեծաքանակ փող պիտի ստանայ, դեռ վերջացրած չեն, հետևաբար և փող չէ ստացել. ուրեմն և այդ պատճառով բանուորների փողը պահում է, սպասելով որ երբ կը ստանայ, այն ժամանակ էլ կը տայ։ Շատ լաւ. բայց բանուորը երեք ամիս անփող կարող է մնալ, նրան արդեօք թոյլ կը տան մի ամիս անվարձ մէկի սենեակում ապրել, ուր մնաց երեք ամիս։ Դեռ այն բանուորներին, որոնք արհեստագէտ են, մի կողմը թողնենք, որովհետև դրանք համեմատաբար չատ ռոճիկ ստանալով, նախապատրաստ միջոց ունեն կառավարվելու։ Բայց ինչ կարող ենք ասել հասարակ բանուորի համար, որ օրը 40—50 կոպէկ է ստանում, այն էլ ամսի կիրակիները և տօները դուրս եկած։ Ուրեմն ամսական 22—24 օր միայն վարձ է ստանում։

Արդարև, եթէ գործարանատիրոջ նիւթական դրութիւնը չը ներէր, ուրիշ բան կը լինէր, բայց որ ներում է, և նա պատրաստ փող ունի,—այդ աններելի է։

Գալով աշխատութեան ժամերի թիւ աւելացնելուն, միթէ զարմանալի է այդ վերաբերել հայի չահասիրական ոգուն։ Քանի որ բանուորների 10 ժամ աշխատութիւնն էլ իրան անհամեմատ չահ է տալիս, ուրեմն ինչու՞ աւելացնել։ Ինչու՞ միւս գործարանները տարիների ընթացքում իրանց կարգով գնում են անփոփոխ,—որովհետև նրանց տէրերը հայեր չեն։

Պ. Կարապետեանցի բարեսրտութեամբ ընդունվել են այդ հայերը, որոնք գրեթէ երիտասարդներ են. Բագուի երիտասարդները առհասարակ, վերջին ժամանակը բաւականի ընթերցասէր են դարձել, մանաւանդ այդ իսկ գործարանում ծառայողները։ Դրանք երեկոյեան, գործից յետոյ, սովորութիւն չունեն չատերի նման աւելորդաբանութեամբ անցնել, բայց միայն ընտանեկան պիտոյքները հոգալ ու այնուհետև ընթերցանութեամբ պարապվել։ Ժամի 6-ին դուրս գալով գործից, կէս ժամից յետոյ հատնում են տունը լուացվում, գնում չուկան միւս օրվայ հարկաւոր բաները առնում, թէյը կամ ընթրիքը անում և անչուշտ մինչ այս մինչ այն անցնում է երեք ժամ,—որից յետոյ սկսում են կարդալ, բայց չատ անգամ ֆիզիքապէս կորցրած ուժը հարկադրում է գրքի վրա նիրհել և պահանջում որ բանուորը հանգստանայ և վերանորոգի կորցրած ուժը միւս օրվայ աշխատութեան համար։ Այդպիսով նա հազիւ իր կարդացածը ըմբռնում է։ Այդ դէպքում արհեստաւորի համար ազատ կէս ժամը, կարծում եմ, նշանակութիւն կունենայ։

Զարմանալին այն է որ այդ ճշմարտութիւնը պ. Շահգեղամեան չատ լաւ է հասկանում և նախանձախնդիր է հայ ժողովրդի յառաջդիմելուն։ Բայց և այնպէս իր գաղափարը թողնում է թերակատար,—թողնում է շահասիրութեան շարժառիթով։ Օգտաւէտ գործերի նախանձախնդիր չատ մարդիկ են եղել և կան, որոնք իրանց չահերի համար ոտնատակ են արել չատ նուիրական գործեր։

Այդ տեսակ չարիքին առաջն առնելու մի միջոց կայ միայն,—այդ տեսակ պակասութիւնների հրապարակ հանելն է։

Բագուեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԹԷԼԱՒԻՑ մեզ գրում են։ «Ցինանդալի անուանված նախկին Զավչավաձէի, այժմեան թագաւորական կալուածքում ամբարանոցի շինութիւնը սկսված է։ Բանում են 400 հոգի, որոնցից 300 նոր եկան Թիֆլիսից։ Եկած մշակները՝ հայ, յոյն և թուրք են։ Կախէթում մշակների վարձը օրից օր բարձրանում է։ Հնձողները ստանում են օրական 1 ռուբլուց մինչև 1 ր. 20 կ., ուտելիք և խմելիք։ Ցինանդալ գիւղը, որտեղ ամբարանոց է շինվում, կենդանութիւն է ստացել։ Խարխուլ, կիսաքանդ փայտաշէն տների վարձը ամսական 20—25 ռուբլի է, և տարեկան 300 ռուբլի վճարում են այնպիսի տներին, որոնց ամբողջ շինութիւնը 300 կոպէկ չարժէ։ Այստեղ լուր է տարածված, որպէս թէ չուտով Թիֆլիսից մինչև Կախէթ երկաթուղի պիտի շինվի։ Առհասարակ Կախէթին գուշակում են մեծ ապագայ։»

—

ԱՐՄԱՒԻՐԻՑ, յուլիսի 16-ից մեզ գրում են որ Ադամեանի խմբից երեք դերասաններ և մի դերասանուհի, Արմաւիրի սիրողների հետ միասին, ներկայացրին «Համլէտ», «Փարիզի աղքատներ» և ուրիշ պիէսաներ։ Ժողովուրդ խիստ չատ էր, ասում է մեր թղթակիցը, այնպէս որ տոմսակները չը բաւականացան։ Ներկայացումն, թղթակցի ասելով, չատ աջող կերպով անցաւ։

—

Թէ Թիֆլիսից և թէ նոյն իսկ գաւառական չատ քաղաքներից դիմում են մեզ և խնդրում են որ յայտնենք, թէ արդեօք Թիֆլիսի Գայեանեան օրիորդաց դպրոցը սեպտեմբերից ինչպէս, ինչ դիրքով և ինչ փոփոխութիւններով պիտի բացվի։ Ինչպէս երևում է չատերը՝ նոյն իսկ գաւառներից՝ իրանց աղջիկներին ուզում են Գայեանեան դպրոցը ուղարկել սովորելու համար։ Խմբագրութեան մէջ եղած տեղեկութիւններից երևում է, որ ոչ միայն Թիֆլիսի Գայեանեան դպրոցը, այլ առհասարակ հայոց օրիորդաց նախկին միջնակարգ դպրոցները, ինչպէս՝ Ալէքսանդրոպոլի օրիորդաց դպրոցը, Երևանի Գայեանեան դպրոցը և ընդհանրապէս երեքից մինչև հինգ կամ վեց դասարան ունեցող օրիորդաց դպրոցները առաջվայ դիրքով չեն բացվիլ, եթէ բացվելու լինեն։ Էջմիածնում հրատարակված ուսումնարանական կանոնների մէջ էլ պարզ ասված է, որ եկեղեցական—ծխական դպրոցները բաժանվում են երկու կարգի՝ միդասեան և երկդասեան։ Միդասեան դպրոցները կունենան երեք տարվայ դասընթաց։ Բացի թեմական դպրոցները, հայոց երկսեռ ծխական դպրոցները այդ երկու տեսակից միայն կարող են լինել։ Բացի այդ երկու տեսակից, ուրիշ, աւելի բարձր կարգի օրիորդաց դպրոցների չը լինելը հաստատվում է և նոյն կանոնադրութեան մի ուրիշ յօդուածով, որտեղ վարժուհիների որտեղից աւարտած լինելու մասին ոչինչ չը կայ ասած։ Այդ յօդուածի մէջ կարդում ենք հետևեալը միայն. «վարժուհիք ընտրին յանպիսեաց, որք վկայեալ իցեն բարի վարուք և մանկավարժական հմտութեամբ իւրեանց»։ Դրանից պարզ երևում է, որ հայոց բացվելիք օրիորդաց դպրոցների վարժուհիները՝ կարող են լինել և հայոց նախկին վարժուհիներից, և ռուսաց իգական գիմնազիոնների աշակերտուհիներից։ Նրանք կարող են լինել և ոչ մի տեղ չաւարտածներից, ըստ որում կանոնադրութիւնը այդ պարտաւորացուցիչ չէ համարում։ Հոգաբարձութիւնը իրաքանչիւր դըպրոցի համար կարող է հրաւիրել վարժուհու պաշտօնով ում կամենում է, ընդունելով որ հրաւիրված վարժուհին «վկայեալ է բարի վարուք և մանկավարժական հմտութեամբ»։

—

Ռուսաց լրագիրները հաղորդում են, որ Նորերբս Պետերբուրգ հասաւ եպօսնացի ճանապարհորդ պ. Մեսսատէրամի։ Գիտնական ճանապարհորդի նպատակն է ծանօթանալ Ռուսաստանի զինուորական և դատաստանական բոլոր հիմնարկութիւնների կազմակերպութեան հետ։

—

Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, ֆինանսների մինիստրութեան տեղեկութիւններից քաղելով, որ երկու ամսվայ ընթացքում՝ եւրոպական Ռուսաստանի, Լեհաստանի և Անդրկովկասեան բոլոր նահանգներից՝ ոգելից խմիչքներից հաւաքված ակցիզը հասնում է 34,071,005 ռուբլու։

—

Մեզ հաղորդում են հետևեալը։ «Ցուլիսի 22-ին Հալաթարի սբ. Աստուածածին (կարմիր Աւետարան) կոչված եկեղեցում, մի հանգուցեալի ծխականութիւնը վերջանալուց յետոյ, եկեղեցուց դուրս բերելու միջոցին հանգուցեալի եղբայրը յարձակվում է նրա վրա։ Ամբոխը միջամտելով՝ մեծ դժուարութեամբ ազատում է հանգուցեալին վայրենու բռունցքներից։ Պատմում են, որ այդ բարբարոսութեան առիթ տուող այն է լինում, որ հանգուցեալը, զրկելով իր եղբօրը, իր օրինաւոր կնոջը, երեք զաւակներին, միւս մօտիկ ազգականներին, իր ահագին կարողութիւնը կտակում է մի ուրիշ կնոջ, որի հետ վերջերս ապրում է եղել։

—

«Нов. Вр.» լրագրի խօսքով չուտով Պետերբուրգ է, և որ ամենից գլխաւորն է, ջուրը բաժանելու իրաւունքը անհատների ձեռքում գտնվելով որ միրաբներ, ջրպետներ են անուանվում, գիւղացու դէպի ջուրը ունեցած իրաւաբանական իրաւունքները բռնաբարում են։ Երևանի նահանգի Սուրմալու գաւառում Երասխից բաւական մեծ տարածութեան վրա մի ահագին առու է անցկացրած յատկապէս մի մեծ կալուածք ջրելու համար. այդ առուից, ի հարկէ, օգտվում են հարևան բազմաթիւ արտեր։ Այդ առուն շինված է պ. Կախանովի աշխատութեամբ։ Մենք այդ մէջ բերեցինք այն նպատակով, որ ցոյց տանք, որ եթէ մեր երկրում մի մարդ, իր մի սեփական կալուածի համար կարող է մի ահագին առու անցկացնել գետից, մի առու, որ քարաէզի մէջ էլ նոյն իսկ կրում է անցկացնողի ազգանունը, ինչու այդպիսի մի առու, նոյն գաւառում, չէ կարող ունենալ մի ամբողջ հասարակութիւն, որ նուիրված է բացառապէս երկրագործութեան։ Եթէ ջուր անցկացնելը կապված լինէր մեծ դժուարութիւնների հետ, ինչպէս, օրինակ, լեռնախիտ երկիրներում, այդ, ի հարկէ, այլ բան է, իսկ Արարատեան դաշտը, այդ ահագին տափարակը, մեր կարծիքով կարող էր հարիւրաւոր ջրանցքներ ունենալ, ամեն մի գիւղ այդ ահանգին դաշտում կարող էր իր սեփական, առատ ջուրը ունենալ։ Մենք արդէն յիշեցինք, որ ջուրը մեր երկրում ամբողջապէս գտնվում է ժողովրդից ընտրված անհատների ձեռքում, որ միրաբներ, ջրպետներ են անուանվում։ Ամեն մի գաւառ ունի առհասարակ երկու միրաբ—մէկը արանի, գաւառի տափարակ մասի համար, միւսը սարերի, գաւառի լեռնային մասի համար։ Ջրպետը ընտրվում է երեք տարով և ընտրութեան մէջ

տեմ։ Ամեն մի վեց համբայի, կամ բոլիւքի 24 ժամվայ ընթացքում ջուր է տրվում իրանց ցանքերը ջրելու համար։ Այդ բոլիւքների արտերը, ինչպէս ասացինք, իրար կից են լինում։ Արտերի ջրելը սկսվում է արեգակի ծագման րոպէից։ Ինչպէս մեր նախընթաց յօդուածում ասացինք, հողատիրութիւնը մեր երկրում համայնական լինելով, հողը հաւասարապէս բաժանվում է հասարակութեան մէջ, այսինքն ամեն մի տուն այնքան հող է ստանում, որքան որ անդամ ունի այդ ընտանիքը, ուստի և ջուրը, նոյնպէս համայնական պրինցիպի, սկզբունքի վրա հիմնված լինելով, դարձեալ հաւասար կերպով բաժանվում է հասարակութեան մէջ։ Ջրի չափը այդ գաւառում այսպէս անուանված ոտն է, իսկ միւս գաւառներում բահ։ Ամեն մի ընտանիք, տուն այնքան ոտ, կամ բահ ջուր է ստանում, որքան որ անդամ ունի այդ ընտանիքը։ Այժմ բացատրենք, թէ ինչպէս է գործածվում այդ չափը։ Արեգակի ծագման րոպէից, ինչպէս ասացինք, սկսվում է արտերի ջրելը։ Առաջին արտի տէրը, որի հերթը արեգակի ծագման րոպէիցն է, երեք ոտ ջրի իրաւունք ունէ, օրինակի համար։ Արեգակի դուրս գալուց յետոյ անմիջապէս յիշեալ արտատէրը կանգնում է մի որոշ տեղ և սկսում է այդ նշանակված տեղից չափել իր ոտով երեք ոտ և ջուրը թողնում է դէպի իր արտը։ Երբ որ գիւղացու ստուերը անցնում է այդ երեք ոտնաչափից, նա անմիջապէս կտրում է իր ջուրը և հերթը միւսին է. այդպէս շարունակվում է մինչև կէս օր։ Իսկ կէս օրից յետոյ, որովհետև ստուերը երկարանում է, ուրեմն և կորցնում է իր նշանակութիւնը, մինչև արեգակի մայր մտնելը ջուրը պատկանում է մի որ և է համբայի, որը, ի հարկէ, աւելի չատ անդամներից է բաղկացած։ Բայց գիւղերները, մանաւանդ աստղալից գիւղերները, ջրից օգտվելու ժամանակամիջոցը աստղերով է որոշվում։ Արեգակի մայր մտնելուց յետոյ մինչև շիշ ու շամբուր աստղերի (Б. и М. Медвѣдица) երևալը ջրում է մէկը, երկրորդի հերթը այդ բոպէից մինչև բուրք աստղերի (многозвѣздіе) երևալը, երրորդինը բուրքի երևալուց մինչև աքլորականչը, այսինքն մինչև աքաղաղների առաջին անգամ կանչելը, չորրորդը սկսում է ջրել աքլորականչից մինչև լուսանոյ աստղ ժողովրդական լեզուով անուանված աստղի երևալը և հինգերորդը լուսնոյ աստղից մինչև Քեարվանդրան աստղի երևալը, այսինքն մինչև այն ժամանակ, երբ նոր սկսվում է լուսանալ, երբ, ինչպէս ժողովուրդը սիրում է ասել, լուսնումութը սկսվում են բաժանվել միմեանցից, երբ քարավանները ճանապարհ են ընկնում և երբ նոցա ամենայարմար միջոցն է կողոպտել։ Այդ է պատճառը, մեր կարծիքով, որ այդ աստղը Քեարվանդրան են անուանում, այսինքն քարվան կողոպտելու, թալանելու միջոց։ Այդպէս, ինչպէս տեսնում էք, աստղերն ու արեգակը մեր գիւղացու համար ամենաճիշդ խրօնօմէտրն են ջուրը հաւասար կերպով բաժանելու համար։ Բայց լինում են, ի հարկէ, և այնպիսի օրեր և գիշերներ, երբ երկինքը բոլորովին մառախլապատ է լինում, երբ ոչինչ չէ երևում, այդպիսի օրերում գիւղացին բնազդմամբ արդէն գիտէ որոշել ժամանակը. նա այնքան վարժված է դրա մէջ, որ չատ քիչ է սխալվում և, որ ամենից գլխաւորն է, այդ հինաւուրց պապերից իրան ատանդած սովորութիւնը այնքան բարձր է, այնքան սուրբ է իր համար, որ հայ գիւղացին երբէք թոյլ չի տայ իրան մեղանչել այդ իր սրտին մօտ պատմական սովորութեան դէմ։ Այդ եղանակով ջրվում են գլխաւորապէս տափարակ տեղերը, որոնք ժողովրդական լեզուով ա ր ա ն են անուանվում, իսկ լեռնային երկիրներում, ուր հաղարաւոր առուակներ ու աղբիւրներ առատ ջուր են մատակարարում ցանքերին, ջրի բաժանման այդ տեսակ սիստեմ չէ գործածվում և, որ գլխաւորն է, լեռնային երկիրների ցանքերը մեծ մասամբ անձրևային ջրով են ջրվում միայն, կամ, ինչպէս ժողովուրդը ասում է, դէ՛մ են։

Այն երկիրները մեզանում, ուր պարապում են գլխաւորապէս երկրագործութեամբ, ընդհանրապէս կարելի է ասել բերրի են, հողը ուժեղ է, գործողը համբերող է ու աշխատասէր, իսկ եթէ հողագործութեան զարգացման այդ գլխաւոր նպաստող պայմաններին աւելացնենք և ջրի առատութիւնը, այն ժամանակ կարող ենք ստանալ այնպիսի բերք, որ կապահովացնէ գիւղական ընտանիքին մի չափաւոր կեանք։ Բայց խնդիրն էլ հէնց նրանումն է, որ բերրի հողը, մեր գիւղացու պատկառելի աշխատանքով հանդերձ, ջրի պակասութեան շնորհով չէ տալիս մեզ այն, ինչ որ մենք կարող էինք ստանալ նրանից։ Դորանով մենք չենք ուզում, ի հարկէ, ասել թէ մեր երկիրը անջուր է, մեր գետերը, մեր լեռների միլիոնաւոր աղբիւրներից ու առուակներից բաղկացած «չայերը», որ առողում են ճանապարհները և նոցա վրայով հաղորդակցութիւնը կորում, չատ բաւական են մեր երկրագործ վայրի համար, իսկ եթէ երկրագործը ջրի կարօտութիւն ունի, այդ նորանից է, որ ջուրը մեր գիւղացու քթի տակին չէ և օգտվել նորանից նա չէ կարող, որովհետև հաւաքական ոյժով գործելը նորան անծանօթ մի բան է և, որ ամենից գլխաւորն է, ջուրը բաժանելու իրաւունքը անհատների ձեռքում գտնվելով որ միրաբներ, ջրպետներ են անուանվում, գիւղացու դէպի ջուրը ունեցած իրաւաբանական իրաւունքները բռնաբարում են։ Երևանի նահանգի Սուրմալու գաւառում Երասխից բաւական մեծ տարածութեան վրա մի ահագին առու է անցկացրած յատկապէս մի մեծ կալուածք ջրելու համար. այդ առուից, ի հարկէ, օգտվում են հարևան բազմաթիւ արտեր։ Այդ առուն շինված է պ. Կախանովի աշխատութեամբ։ Մենք այդ մէջ բերեցինք այն նպատակով, որ ցոյց տանք, որ եթէ մեր երկրում մի մարդ, իր մի սեփական կալուածի համար կարող է մի ահագին առու անցկացնել գետից, մի առու, որ քարաէզի մէջ էլ նոյն իսկ կրում է անցկացնողի ազգանունը, ինչու այդպիսի մի առու, նոյն գաւառում, չէ կարող ունենալ մի ամբողջ հասարակութիւն, որ նուիրված է բացառապէս երկրագործութեան։ Եթէ ջուր անցկացնելը կապված լինէր մեծ դժուարութիւնների հետ, ինչպէս, օրինակ, լեռնախիտ երկիրներում, այդ, ի հարկէ, այլ բան է, իսկ Արարատեան դաշտը, այդ ահագին տափարակը, մեր կարծիքով կարող էր հարիւրաւոր ջրանցքներ ունենալ, ամեն մի գիւղ այդ ահանգին դաշտում կարող էր իր սեփական, առատ ջուրը ունենալ։ Մենք արդէն յիշեցինք, որ ջուրը մեր երկրում ամբողջապէս գտնվում է ժողովրդից ընտրված անհատների ձեռքում, որ միրաբներ, ջրպետներ են անուանվում։ Ամեն մի գաւառ ունի առհասարակ երկու միրաբ—մէկը արանի, գաւառի տափարակ մասի համար, միւսը սարերի, գաւառի լեռնային մասի համար։ Ջրպետը ընտրվում է երեք տարով և ընտրութեան մէջ

բուրդ է գալու Իտալացի նկարիչ Կաղալինօ, որտեղ մի առժամանակ մնալուց յետոյ պիտի գայ Կովկաս։

—

Ներկայ 1886 տարվայ եօթ ամիսը արդէն անցել է և մնում է միայն հինգ ամիս, բայց «Մշակի» թէ Թիֆլիսի և թէ գաւառների բաժանորդներից շատերը դեռ չեն վճարել իրանց բաժանորդագինը։ Խնդրում ենք ուղարկել մեզ ապառիկները անպատճառ այս ամսվայ ընթացքում։

—

«Մշակի» անցեալ 82 համարում մի տպագրական սխալ մտաւ արտաքին լուրերի բաժնում. 10-երորդ տողում փոխանակ «Նապօլիայի» պիտի լինի «Սպանիայի»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

—

Գերմանական բէյխստագի նստաշրջանը վերջացաւ, և այդպիսով այդ պետութեան քաղաքական կեանքը մի առժամանակ դադարում է աղմուկներ յարուցանելուց։ Անցեալ նստաշրջանը բաւականին աղմկալից էր. բէյխստագի քննութեանը այդ միջոցում ենթարկվեցան մի քանի նշանաւոր խնդիրներ։ Սօցիալիստների խնդիրը և լեհական հարցը միմիայն բաւական էին չօշափելու թէ երկրի ներքին՝ տնտեսական դրութիւնը, և թէ՝ այն բոլոր շրջանները, որոնց մէջ պատում են գերմանական բոլոր նշանաւոր կուսակցութիւնները, և այդպիսով՝ կրկին հանդէս եկան թէ կաթօլիկ եկեղեցու, թէ կառավարութեան ձգտումների, թէ երկրի արդիւնաբերութեան զարգացման, և թէ՝ մասամբ արտաքին քաղաքականութեան նշանաւոր խնդիրները։ Այդ բոլորը դեռ չէ լուծված. այս կամ այն սկզբունքին ծառայող կուսակցութիւնները չեն կարողանում ճիշտ կերպով պարզել նոյն իսկ մօտիկ ապագան, որ թէև մասամբ պարզ է այն բանը, թէ ինչը կը լինի Գերմանիային զբաղեցնող ամենամեծ խնդիրը այդ մօտիկ ապագայում։ Իշխան Բիսմարկ պարզապէս իր քաղաքականութեանը ամենախիստ կերպարանք տուեց. դրան ամենակենդանի ապացոյց կարող են լինել այն բոլոր բացառական խնդիրները, որոնք կառավարութեան կողմից բէյխստագի քննութեան առաջարկվեցան, և այն յարաբերութիւնները, որ ունեցան Բիսմարկ և իւրայինները դէպի ժողովրդեան ներկայացուցիչների ազատամիտ մասը։ Բիսմարկ իր յարաբերութիւնները կաթօլիկ եկեղեցու և նրա գլխի՝ Պապի հետ նորից փոխեց։ Նա բարեկամութիւն հաստատեց պապի հետ, ըստ որում իրան այդպէս էր պէտք։ Կենտրօնի կուսակցութիւնը իր ծանրակշիռ նշանակութիւնը այդպիսով Բիսմարկի աչքում կորցնում է, չը նայած որ Վինդհօրստ մեծ շարժումներ գործեց անցեալ նստաշրջանի ընթացքում իր կուսակցութեան բարեկամութեան անհրաժեշտութիւնը ցոյց տալու։

Կենտրօնի նշանակութիւնը թուլանում է. թուլանում է դրա հետ և երկրորդ պատմական նշանակութիւն ունեցող՝ ազգային-ազատամիտ կուսակցութիւնը։ Գերմանիայի միութեան գաղափարների յուզման փառաւոր ժամանակը անցաւ. անցաւ և այն շրջանը, երբ պետութիւնը լարված յարաբերութիւնների մէջ էր դէպի եկեղեցին։ Կենտրօնի կուսակցութեան մարմնացած ընդդիմադրութիւնն է ազգային ազատամիտ կուսակցութիւնը. թուլացաւ առաջինի նշանակութիւնը, թուլանում է և երկրորդի արժէքը։ Ապարէզը գլխաւորապէս բաց է պահպանողական և առաջադիմականների կուսակցութեան համար. նոքա դեռ մեծ դեր ունեն ապագայի մէջ։ Այստեղ բացի լոկ քաղաքագիտական ոգին, մեծ դեր է խաղում և բուրժուազիայի և ազնուականութեան բուն տնտեսական յարաբերութեան խնդիրը։ Այդ տնտեսական ծանրակշիռ խնդիրը կրկին անգամ իր ներգործութիւնը ունեցաւ, երբ բէյխստագի քննութեան ենթարկվեցան խմիչքները հարկի ենթարկելու և լեհացիներից հողերը խլելու կառավարչական առաջարկութիւնները, այն առաջարկութիւնները, որոնց ամենայն այժով դիմադրում էր ազատամիտ առաջադիմական կուսակցութիւնը։

Երկրի տնտեսական դրութիւնը և տնտեսական շահերը՝ դառնում են Գերմանիայի համար կեանքի և մահու խնդիր, և հաւանական է որ ապագայում՝ պարլամենտական գործունէութիւնը կը պատի այդ խնդրի շուրջը, որի վերաբերութեամբ շատ փոքր նշանակութիւն կարող են ունենալ այն կուսակցութիւնները,—կենտրօնի և ազգային ազատամիտ,—որոնց գոյութեան հիմքը, ինչպէս յիշեցինք, Գերմանիայի մօտիկ անցեալի արդիւնքն է, և որոնց սկզբունքները այժմ երկրորդական նշանակութիւն են ստանում։ 1866 թուականից սկսած առանձնապէս Գերմանիան մեծ զոհողութիւններ է արել իր ներքին միութեան և արտաքին գերազանցութեան համար։ Անցեալ փառքի շնորհով այժմ էլ փայլող Բիսմարկ շատ լաւ գիտէ, որ գերմանական ազգը թէ նիւթական և թէ բարոյական մեծ հարուածներ է կրել՝ այդ երկու առաւելութիւնը ձեռք բերելու համար։ Գերմանական ոգևորվող ազգը իր երկու մեծ ցանկութիւնը իրագործված է տեսնում։ Նա, հարկաւոր յարգանքը ցոյց տալով իր այդ մեծ փառքի հերոսներին՝ սպասում է, որ նրանց առաջնորդութեամբ կը հասնի տնտեսական և մասաւոր մեծ առաւելութիւնների։ Տնտեսական խնդիրն է, որ այսօր առաջին տեղն է բռնում Գերմանիայի կեանքի մէջ։ Նրա առաջ պէտք է խոնարհվի ամենայն հարց։ Այդ շատ լաւ զգում է և կառավարութիւնը, որի համար կենդանի օրինակներ կը լինեն անկասկած վերջին եղելութիւնները։ Իշխան Բիսմարկ իր բոլոր այժը գործ է նում արտաքին քաղաքականութեան մէջ փայլելու. նա ուղղակի թէ անուղղակի խառնվում է բոլոր գործերում. նրա մատը խառն է և բալկանեան գործերում, և եւրօպական գաղթական երկրների հարցում, և ամբողջ Եւրօպայի խաղաղութեան կամ պատերազմական շարժումների խնդիրներում։ Սակայն այդ բոլորի վերջին կէտը՝ հայրենիքի տնտեսական զարգացման խնդիրն է, որը օրիցօր աւելի ու աւելի է յուզում ոչ միայն Գերմանիան, այլ և ամբողջ Եւրօպան։ Հաւանական է, որ նոյն իսկ բէյխստագի յաջորդ նստաշրջանի գլխաւոր պարապմունքները կը պատեն՝ երկրի արդիւնաբերութեան, առևտուրի և դրանց հետ կապ ունեցող խնդիրների շուրջը։ Այդ տեսակէտից նայելով խնդրին, հասկանալի է թէ ինչու Գերմանիան հէնց այժմ լուրջ բանակցութիւններ է սկսել՝ Աւստրօ-Ունգարիայի հետ մաքսային դաշնակցութիւն կազմելու համար։ Եւրօպայում ներկայումս տիրապետում է տնտեսական ընդհանուր կրիզիս, որը օրիցօր աւելի ու աւելի ծանրանում է։ Կրիզիսի ժամանակ, ազատ վաճառականութեան, խաղաղ մրցման սկզբունքը մեռելութեան է մատնված։ Երկրի արդիւնաբերութիւնը ծաղկեցնելու միակ միջոցը դարձել է ներքին հովանաւորութիւնը, որով մաքսերը վերջին ժամանակները շատանում և սաստկացնվում են։— Մաքսային քաղաքականութիւնը այժմ տիրապետում է Եւրօպայի համարեա բոլոր երկրների արդիւնաբերութեան վրա։ Թէ ինչ հետևանքներ կարող է ունենալ այդ քաղաքականութիւնը,— այդ պարզ մի հարց է տնտեսագիտական գիտութեան առաջ։ Գլխաւորը այն է, որ այդ դրութիւնից դուրս գալու համար այժմ Եւրօպայում առանձին ուշադրութեան նիւթ է դարձել ընդհանուր եւրօպական մաքսային դաշնակցութեան գաղափարը։—Այդ գաղափարը այժմ քննվում է շատ տեղ։ Թէ ինչի մէջ են կայանում այդ մաքսային դաշնակցութեան մանրամասնութիւնները, այդ ուրիշ խնդիր է, այդ մասին կաշխատենք մի ուրիշ անգամ խօսել. նշանակութիւն ունեցողը այն է, որ դա մի զօրեղ միջոց է համարվում տնտեսական կրիզիսից դուրս գալու համար, և Գերմանիան, որի քաղաքականութիւնը արտաքուստ միշտ պատերազմական բնաւորութիւն ունի, և որտեղ Բիսմարկի ջանքերը միմիայն պատերազմական և դիւանագիտական ելևէջների շուրջն են պտտում, առաջինն է, որ ջանք է գործ դնում օգուտ քաղելու մաքսային դաշնակցութեան գաղափարից։ Բիսմարկը այդ բանի համար է աշխատում, թէև չէ մոռանում տեսնուել կոմս Կալնօկիի հետ, թէև ցանկութիւն ունի տեսնվելու և Գիրսի հետ։ Այդ ուղղութեան է դիմում Գերմանիան։ Եւ եթէ այդ ճանապարհի վրա Գերմանիան պատերազմը հարկաւոր կը համարի, այդ կը լինի՝ ոչ աւելի՝ քան մի անհրաժեշտ չարիք։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Presse» լրագիրը հաղորդում է, որ բուլգարական մինիստր-նախագահ Կարավելով և ազգային ժողովի նախագահ Ստամբուլով նորերումս այցելեցին Սոֆիայի ռուսաց ներկայացուցչին։ Կարծում են, որ դա նշան է մօտիկ հաշտութեան երկու պետութիւնների մէջ։

—«Daily News» լրագրին հեռագրում են Թաւրիզից հետևեալը. «Նշանաւոր Համզա-աղայի որդին՝ Բաթիր-աղան ապստամբութեան դրօշ բարձրացրեց։ Նրա հետ միացել են թէ Պարսկաստանի և թէ Ցաճկաստանի քուրդերից շատերը։ Կառավարութեան կողմից զօրք է ղրկված նոցա դէմ։ Ապստամբութիւնը ծանր կերպարանք ունի»։

—Յուլիսի 8-ին Կ. Պոլսում վառօդի պահեստը կրակ ընկաւ։ Ուժգին թնդիւնից մերձակայ տների պատուհանների ապակիները փշրվեցան։ Սպանված են մի քանի մարդիկ։ Փչացած է մեծ քանակութեամբ վառօդ։

—Իշխան Ալէքսանդր մտադիր է շուտով Անգլիա գնալ։

—«Новости» լրագրին հաղորդում են Վիէննայից, որ Իշխան Ալէքսանդր արգելեց ռուսաց թղթադրամի գործածութիւնը ամբողջ Բուլգարիայում։

—«Fars» լրագրում կարդում ենք հետևեալը Կաքուլից գրած. «Օրերումս Փայս-Աբատից եկած սուրհանդակը լուր բերեց էմիրին, որ իբրև թէ Տաշ-Կուրգան է եկել ռուսաց գործակալը, և նրա նպատակն է համոզել տեղական ցեղապետներին կամաւորապէս ռուսաց հպատակութիւնն ընդունելու։ Եթէ այդ միտքը իրագործվի, այն ժամանակ երկու մեծ պետութիւնները՝ Անգլիան և Ռուսաստանը բաժանված կը լինեն միմեանցից միմիայն 30 մղոն տարածութեամբ»։

—Բուլգարիայում Ցանկօվի համարեա յաղթված կուսակցութիւնը դեռ շարունակում է օրհասական կռիւ տալ հակառակ բանակների հետ։ Նորերումս Ցանկօվի օրգան «Միութիւն» լրագրում երևեցաւ մի յօդուած՝ Կարավէլօվի հացէին գրած։ Այդ յօդուածի մէջ Ցանկով խօսում է այն միջոցների մասին, որոնք անհրաժեշտ են Ռուսաստանի բարեկամութիւնը վերականգնելու համար։ Ուրիշ միջոցների հետ միասին Ցանկով առաջարկում է և հետևեալը. «Ռուսաստանի հետ բարեկամութիւնը վերահաստատելու համար պէտք է որ իշխան Ալէքսանդր հեռանայ Բուլգարիայից։ Իշխանն է եղել պատճառը, որ Ռուսաստանը այժմ թշնամանում է գաւառի ամբողջ ազգաբնակութիւնը, թէ հայ և թէ մահմեդական։ Քրդերը միայն, որոնք ամառը բնակվում են լեռներում և որոնց ցանքերը դէմի են, այսինքն անձրևի ջրով են ջրվում, չեն ունենում միրաբ։ Միրաբին և նրա կանդիդատին վաւերացնում է տեղական նահանգապետը։ Զրպետը, որպէս վարձատրութիւն իր աշխատանքի համար, ըստ սովորութեան, ստանում է ամեն մի տանից տասկօպ։ Միրաբի գործունէութիւնը սկսվում է գարնան սկզբից և տևում է մինչև աշնան վերջը։ Որովհետև գաւառի ամբողջ տափարակի համար մէկ միրաբ է ընտրվում և նա անկարող է միակ կառավարել իր այդ ահագին շրջանը, այդ պատճառով նա վարձում է իր համար մի տեսակ օգնականներ, կամ աւելի լաւ է ասել ծառաներ, որ ջուր են անուանվում։ Որովհետև այն մեծ գետից, որտեղից գաւառի մի մեծ մասը ջուր է տանում իր արտերի համար, մի քանի միայն գլխաւոր առուներ են անցկացրած, որտեղից բաժանվում են բազմաթիւ փոքրիկ առուներ, որոնցով ջուրը տարածվում է գաւառի չորս կողմը, ուստի այդ գլխաւոր առուների ամեն մէկի վրա մի առանձին ջուվար է լինում, որ կարգադրում է ամեն բան, իսկ ինքը, միրաբը, ամբողջ օր ու գիշեր, ձի նստած, գաւառի մի ծայրից միւսն է գընում, ջրի բաժանման ընդհանուր կարգապահութեան հաւասարակշռութիւնը պահպանելու համար։

Միրաբը թէև մի տեսակ պաշտօնական անձնաւորութիւն է, բայց նրա իրաւունքները այնքան անորոշ են, այնքան անսահման են, որ չեն ենթարկվում ոչ մի կօնտրոլի։ Զրպետը չունի իր պաշտօնին վերաբերեալ մի որ և է խմբագրված կանոնադրութիւն, հրահանգ, նա իր պաշտօնավարութիւնը հիմնում է միայն ժողովրդի դարևոր սովորութիւնների վրա, իսկ ժողովուրդը, իր միջից ընտրելով միրաբին, այնպիսի անսահման իրաւունքներ է տալիս նրան, որ նա մոռանալով իր կոչումը, ժողովրդից իրան ընծայված հաւատը, ոտնակոխ է անում այդ ժողովրդի նուիրական ինստիտուտը, բռնաբարում է ժողովրդի իրաւունքը, սարսափելի զեղծումներ է գործում։ Միրաբից կախված է գիւղացու վիճակը։ Այսօր նա մի գիւղացուց, որ շատ կալուածներ ունի և հետևապէս և ջրի մեծ պէտք, մի լաւ վճար է առնում և կարգադրում է այս կամ այն գիւղի ջուրը կտրել և տալ նրան։ Միրաբի այդ տեսակ կամայականութեան դէմ առհասարակ չեն բողոքում, իսկ եթէ բողոքում էլ են, ոչինչ չեն շահվում, որովհետև, դիցուք թէ գաւառապետը, որին որ դիմում է գիւղացին, յանցաւոր ճանաչեց միրաբին և հրամայեց ջուր տալ գիւղացուն, բայց գիւղացու արտը արդէն կրակվել և այրվել է. նրա արտը ջրելու հերթից մինչև գաւառապետից հրաման ստանալը արդէն չաթթիներ են անցել, իսկ գեղջուկի արտը այդքան ժամանակ անջուր մնալով, արեգակի կիզիչ ճառագայթների տակ փչացել, ոչնչացել է և եթէ գիւղացին, գարնան սկզբին երազում էր ստանալ, օրինակ, 10 խալվար (300 պուդ) ցորեն, գարի, այժմ ստանում է միայն իր երազածի կէսը։ Այդպիսով, ինչպէս տեսնում էք, եթէ գիւղացու բողոքը լսվում է, բայց և այնպէս նա միշտ վնասված է լինում, որովհետև նրա բողոքը այն ժամանակն է վճռվում, երբ նրա կորուստը արդէն անվերադառնալի է լինում։ Զրպետի պաշտօնի սանձարձակութիւնն է որ այդքան կանդիդատներ է գրաւում և այդքան խռովութիւնների պատճառ լինում։

Միրաբի ընտրութիւնը մի ամբողջ դարագլուխ է կազմում գաւառական կեանքում։ Մենք առիթ ենք ունեցել ներկայ գտնվել թէ տափարակ և թէ լեռնային տեղերի միրաբի ընտրութեանը։ Զրպետի ընտրութիւնից մի քանի ամիս առաջ արդէն գաւառի մէջ սկսվում է իրարանցումը, տասնեակ մարդիկ, գաւառական այս կամ այն կուսակցութեան, խմբին պատկանող անձնաւորութիւններ, վաղորդայն սկսում են շրջել գաւառը և համոզել ժողովրդին այս կամ այն մէլիքի, բէգի, խանի կանդիդատուրան պաշտպանել։ Կաշառքը, խոստումները, ամեն տեսակ հնարագիտութիւնները անդադար գործում են։ Ազդեցութիւն ունեցող մարդկանց մէկին մի չուխա տալիս, միւսին մի գլուխ շաքար, երրորդը խաթրի համար է համաձայնվում, չորրորդին սաստում վախեցնում են,—և այդպիսով գործը, ինչպէս ասում են, գլուխ բերում, այս կամ այն մարդու ընտրութիւնը յաջողեցնում։ Միրաբի ընտրութիւնը շատ մրրկալից է լինում. այն գիւղը, որտեղ որ նշանակված է լինում քուէարկութիւնը, այնպիսի մի կենդանութիւն է ստանում, գիւղը միշտ խուլ, մեռած դրութիւնից յանկարծ այնպէս զարթնում է, որ կարծես թէ Միացեալ Նահանգների նախագահ Կլէվելենդի ընտրութիւնը լինի։ Ընտրութիւնների ժամանակ գրեթէ միշտ դեմոնստրացիաներ են լինում ընտրութեան ժամանակ նախագահող գաւառապետի, կամ նրա օգնականի դէմ, կատաղի կռիւներ են պատահում, որոնք առաջ են բերում երբեմն և սպանութիւններ։ Զրպետի ընտրութեան այդ աղմկալի բնաւորութիւնը բացատրվում է անկասկած այն մեծ նշանակութեամբ, որ ունի միրաբը գիւղական կեանքում։ Միրաբի ընտրութիւնը հիմնված է բուն ռամկապետական պրինցիպների վրա, մեր գիւղացին, որին մենք սովոր ենք տեսնել միշտ կրաւորական դերում, այժմ, երբ շօշափվում է նրա հացի խնդիրը, քաջալերվում, երևան է գալիս, բարձրացնում է իր ձայնը. և ամեն ճիգ թափում իր դարևոր իրաւունքները պահպանելու համար.... բայց շատ անգամ ընտրութիւնը միայն սկզբունքով ընտրութիւն է լինում, ժողովրդի իրաւունքը զոհվում է մի որ և է ուժեղ կուսակցութեան կամայականութեանը և գիւղացին, միշտ զրկանքներ կրելով տրանջում է և իր ազատ ընտրողական իրաւունքը անիծում։

Այդպիսով, ինչպէս տեսնում է ընթերցողը, մեր գիւղական, գաւառական կեանքի գլխաւոր տարրեր՝ հողն ու ջուրը, մեր գիւղացու գոյութեան այդ միակ յենարանը, դարերից ի վեր անաջող դասաւորված հանգամանքների շնորհով, դեռ տակաւին նրա, ամբոխի, սեփականութիւնը չէ։ Ջրի տիրապետութեան և նրանից օգտվելու իրաւունքները այնքան դեռ անորոշ են, այնքան կնճռված, խճճված մեր երկրում, որ օգտվում և յաղթող է հանդիսանում այդ խնդրում միշտ ուժեղը։

Գաւառական կեանքի այդ երկու հարցերը տակաւին դեռ հիմնված են ուժեղի իրաւունքների վրա (кулачное право) և գործերի այդ դրութիւնը դեռ շատ երկար կը ծանրանայ մեր տնտեսական դրութեան վրա, եթէ ջրի հարցը Անդրկովկասում, որ առաջին հերթական խնդիրն է, հողային հարցից յետոյ, չը կանոնաւորվի, չը դնվի յայտնի, դրական սկզբունքների, հիմունքների վրա։

Երևան. Ս. Զորդանեան

կան աչքով է նայում Բոլգարիայի վրա։ Այո, իշխան Ալէքսանդրն է պատճառը, որ մենք չենք կարողանում հաշտվել Ռուսաստանի հետ։ Իսկ Ցանկովի կարծիքով այդ հաշտութիւնը անհրաժեշտ է։

—Լօնդօնից հեռագրում են, որ Նիւ-Ֆաունդլենդում յայտնվեցաւ տիֆ։ Մինչև այժմ մեռածների թիւը հասնում է 1,500-ի։

—Ենթադրութիւն կայ Փարիզի համաշխարհային հանդէսը յետաձգել մինչև 1890 թուականը, որովհետև մինչև 1889 թուականը դժուար թէ կարելի լինի տեսնել հարկաւոր պատրաստութիւնները։ Բացի դրանից, ենթադրում են, որ 1890 թուականին՝ հանդիսին կը մասնակցեն և այն պետութիւնները, որոնց մասնակցութիւնը 1889 թուականում կասկածելի է, ըստ որում այդ ժամանակ տօնվելու է և յեղափոխութեան հարիւրամեակը։

—Սպանիայի պատգամաւորների ժողովը 148 ձայնով ընդդէմ 16-ի, ընդունեց Անգլիայի հետ կապած առևտրական դաշնադրութիւնը։ Յուլիսի 22-ին Բարցելօնում տեղի ունեցաւ 300 գործարանատէրերի մի ժողով, որը վճռեց բողոքել այդ որոշման դէմ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Իտալիայում նորերս հրատարակվեցան շատ հետաքրքրական տեղեկութիւններ զանազան երկիրներում տեղի ունեցող չարագործութիւնների մասին։ Այդ տեղեկութիւններից ի միջի այլոց երևում է, որ ամենից շատ սպանութիւն լինում է Իտալիայում, այն է 100,000 բնակիչների վրա գալիս է 8,12. Սպանիայում՝ 7,83, Ունգարիայում՝ 8,09. Գերմանիայում՝ 1,11. Անգլիայում՝ 0,60։

*
* *

Ռուսաց մի լրագրում կարդում ենք հետևեալը։

—Ինչով են ապրում Սիբիր աքսորածները։

—Ոմանք գողանում են. ոմանք կողոպտում են. միւսները համ գողանում համ էլ կողոպտում են. ոմանք շատ գողանում են, մի քիչ էլ աշխատում են. մի քանիսներն էլ չեն գործում, այլ աշխատում են....»։

*
* *

Սեպտեմբերին Ժընեվայում կը կայանայ միջազգային գրականական ժողով։ Այդ ժողովում կը ստորագրվի Անգլիայի, Գերմանիայի, Շվեյցարիայի, Շվեդիայի, Իտալիայի, Սպանիայի և Բուլգարիայի մէջ ընդունած գրականական պայմանագիրը։

*
* *

Ի պատիւ Գլադստօնի Դուբլինի մէջ արձան կանգնեցնելու միտքը օրիցօր աճում է Իրլանդիայում։ Ցանկութիւն կայ հանգանակութիւն սկսելու։ Իրլանդիան անկեղծօրէն ցանկանում է իր խորին յարգանքը ցոյց տալ իր ազատութեան մեծ բարերարին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ԿԱԶԱՆ, 23 յուլիսի։ Այսօր առաւօտեան հասաւ Կազանի նաւահանգիստը ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը։ Տեղական իշխանութիւնների, քաղաքի, բօրսայի և զեմստվօի ներկայացուցիչներին ընդունելու միջոցին մինիստրը ասեց, որ Կազան-Մուրոմեան գծի հաստատվելուց յետոյ, աշնանը կը սկսվեն աշխատանքները ճանապարհի երկու ծայրերից էլ, ինչպէս և ծոցի և դէպի Վոլգա տանող ջրանցքի շինութիւնը, դումայի ենթադրութիւնների համեմատ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 յուլիսի։ Երեքշաբթի, Թագուհի Կայսրուհու անուանակոչութեան տօնի պատճառով, Պետերգոֆի Մեծ պալատի եկեղեցում, Կայսերական ընտանիքի և օգոստափառ հիւրերի ներկայութեամբ պատարագ մատուցվեցաւ, որի վերջանալուց յետոյ Նոցա Կայսերական Մեծութիւններին շնորհաւորութիւններ արին։ Երեկոյեան Օլգեան կղզու վրա, բացօդեայ բալետ ներկայացրին, որից յետոյ Կայսերական ընտանիքը և օգոստափառ հիւրերը կառքերով դիմեցին, լուսաւորված Պետերգոֆի մէջ անցնելով, դէպի ներքին պարտէզը, որը լուսաւորված էր բազմագոյն ճրագներով և լցված էր զբօսնողներով։ Երեկոյթը վերջացաւ հրախաղութեամբ, որ վառվեց «Մոնպլէզիրի» առաջ գտնվող պատերազմական նաւերի վրա։

ՍՕՖԻԱ, 24 յուլիսի։ Թագուհի Կայսրուհու անուանակոչութեան տօնի առիթով՝ շատ եկեղեցիներում գոհացողական մաղթանքներ կատարվեցան։

ՖՐԱՑԲԷՐԳ, (Սակսոնիայում) 24 յուլիսի։ Սոցիալիստների գործի մասին վճիռ կայացաւ. բոլոր մեղադրեալներն համարվում են մեղաւոր գաղտնի ընկերութեանց մասնակցելու մէջ։ Մի քանիսը, որոնց թւում գտնվում են գերմանական պարլամենտի անդամ Բէբել և Ֆոլմար, դատապարտված են ինամսեայ բանտարգելութեան, միւսները վեցամսեայ բանտարգելութեան։

ՀԱՑԴԼԲԵՐԳ, 24 յուլիսի։ Թանգարանում երէկ տեղի ունեցած բանկէտում Բաղրնի մեծ դուքսը առաջարկեց կենաց 'ի պատիւ Վիլհելմ կայսրի—պաշտպանի գերմանական ոյժի և եւրօպական խաղաղութեան, իսկ Թագաժառանգ իշխանը կենաց առաջարկեց ի պատիւ Բաղրնի մեծ դուքսի։

ԼՕՆԴՕՆ, 25 յուլիսի։ «Բէյտերի գործակալութիւնը» հերքում է այն լուրը, որ իբր թէ Մուխթար-փաշան յետ է կանչվում Եգիպտոսից և նշանակվում է թիւրք զօրքերի գլխաւոր հրամանատար։ Հայաստանում, ռուսաց սահմանի վրա, հանդամանքները այդպիսի կարգադրութիւն բոլորովին չեն պահանջում։

Կ. ՊՕԼԻՍ, 25 յուլիսի։ Երէկ մի անյայտ տաճիկ երեք անգամ ատրճանակ արձակեց մեծ վիզիրի վրա, բայց ոչ մէկը չը դիպաւ։ Քննութեան միջոցին յայտնեց, որ նա կորցրեց ամբողջ կարողութիւնը մի անարդարութեան պատճառով և մեծ վիզիրի կեանքի դէմ փորձ փորձելով ուզեցել է սուլթանի ուշադրութիւնը դրաւել իր վրա։

ԼՕՆԴՕՆ, 25 յուլիսի։ Գլադստօնը յայտնեց, որ յոգնած լինելու պատճառով նա ստիպված է հեռանալ հանգստանալու մի քանի ժամանակով, որը կանցկացնի նա Անգլիայում և արտաստմանում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 յուլիսի։ Լրագիրները հաղորդում են, որ արտաքին գործերի մինիստրը Ֆրանցէսբադ կուղևորվի կիրակի։

ԼՕՆԴՕՆ, 25 յուլիսի։ Երէկ երեկոյեան կայացաւ նոր պարլամենտի նիստը։ Պատգամաւորների ժողովի նախագահ ընտրվեցաւ Պիլ։ Ազատամիտ հերձուածողների ժողովում նրանց գլխաւորը՝ Չարտինգտօն առաջարկեց զգուշանալ ամեն տեսակ թշնամական գործողութիւններից Գլադստօնի կուսակիցների դէմ և տեղեր գրաւել նրանց հետ միասին որպէս զի ապացուցանեն, թէ իրանք համաձայն են նրանց հետ ամեն բանում, բացի իրլանդական խնդրից։ Առաջարկութիւնը ընդունված է։ Զէմբէրլէն,—արմատական բաժնի առաջնորդը նոյնպէս համաձայնվեցաւ Չարտինգտօնի կարծիքի հետ։

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ԴԱՐԱՋԻՋԱԳ, Ս. Ղ. Թիֆլիսի կենտրօնական գրավաճառանոցում կայ ողագրութեան մասին հետեւեալ ձեռնարկը. «Практическое руководство къ изученію русской стенографіи» Паульсонъ и Мессеръ (1881)։ Գրքի գինը 1 բուբլի 10 կ. է։

ԹԻՖԼԻՍ. Օտար. Ձեր հերքումը ուղարկել էք առանց ստորագրութեան։ Ձը ստորագրուած նամակները չեն տպվում։

ԱՐԴՈՒԻՆ. Տ. Պ. Ե. Սատանքը 3 բուբլի, բայց յուլիսից մեր լրագիրը կէս տարով արժէ 6 բուբլ։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ

Ցանձն է առնում թարգմանել ֆրանսերէնից մասերի գերմաներէնից և անգլիերէնից ռուսերէն։ Հարցնել «ՄՇԱԿԻ» խմբագրատանը։ 45—100

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։

Աւանդելի առարկայք սոքա են՝ 1) Առևտրական ֆնտեսութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4)Թուաբանութիւն համարիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն, և 7) Գեղագրութիւն։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնները օգոստոսի 25-ից, ամենայն օր, երեկոյեան 5-ից, մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում՝ Սոլոլակում, Լաբօրատորնայա փողոցի վերայ, Յովհաննէս Ղորղանեանի տանը, № 11։ Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ԶՐԻԱՊԷՍ եղբ. Ծովիանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում ենկուրսերի հիմնողին՝— въ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

5—15

ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ

ՊԱՐՖԻՒՄԸՐԻ

ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿ.

Ֆաբրիկայից

Որ արժանացրած է եղել բազմաթիւ մեդալների համաշխարհային ցուցահանդէսներում, կարելի է ստանալ բոլոր ամենալաւ մագազիններում՝

ՌՈՒՍԱՑ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ 2—12 (շ)

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

(N. PAQUET ET COM.)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Չորեքշաբթի, օգոստոսի 6-ին, „ՄԻՆԳՐԷԼԻԱ“ (MINGRÉLIE) շոգենաւը, նաւապետ ԺԻԲՈՒԷՆ (GIBOIN) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզօն, Օրդու, Սամսօն, Կ. Պոլիս և Մարսէյլ։ Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում պ. Գարանիօնին և Թիֆլիսում պ. Բէնօին, նախկին Արծրունու գալերէում, № 103. 2—4

ԹՈՑԼՏԻՈՒԹԵԱՄԲ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Էլէկսիր-Melange. Մազերի արագ և առատ բուսացնելու համար և նրանց պահպանելու թափվելուց։ Գինը 2 ր. սրուակի համար, գործածութեան հրահանգի հետ միասին, ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով։

Բալզամ—Eugénie. դափնեա և պսակի փունջի ծաղիկներից, երեսին, շլինքին և ձեռքերին քնքշութիւն և փափկութիւն, նոյնպէս և մարմարիոնի սպիտակութիւն տալու համար, շուշանի և վարդի անուշահոտութեամբ, նոյնպէս կաշու անհարթութիւնը և բիծերը ոչնչացնելու։ Գինը 1 ր. 75 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուներով։

Կարմրադեղ—Eugénie. հեղուկ, թուշերին և ականջներին բնական վարդի գոյն տալու, որ չէ փոխվում էլէկտրական լուսաւորութեան ժամանակ և որ չէ սրբվում երեսի քրտինքից։ Առաջարկվում է մանաւանդ թատրոնների և պարահանդէսների համար։ Գինը 1 ր. 50 կ. սրուակի համար, գործածութեան հրահանգով ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով։

Այդ բոլոր երեք կոսմէտիական արդիւնքները բժշկական վարչութեան վկայութեամբ, չեն պարունակում իրանց մէջ որ և է վնասակար նիւթեր։ Բէրթա Ռիս.

ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆ ՍՏԱՑԱԾ ՊՕՄԱԴ

իսկական «Pasta Eugénie», գերազանց միջոց կաշու ամեն տեսակ բծերի, և երեսի վրա պատահող ուրիշ անախորժ երեոյթների դէմ։ Տալիս է երեսի գոյնին երիտասարդական թարմութիւն և գեղեցկութիւն։ Գինը մի սրուակի համար 1 ր. 60 կ.

Քինին-գլիցերինեան պօմադ պերուական բալզամից, մազերը պնդացնելու, խտացնելու և մեծացնելու համար։ Գ. 2 ր. սրուակի համար։

Ձեռքերի պօմադ։ Գինը սրուակի համար 1 ր. 30 կ.։ Իւրաքանչիւր սրուակի վրա գտնվում է պաշտպանողական դրոշմ, մի «հրեշտակ» և հնարող ստորագրութիւն «Bertha Ries».

Իսկական «Poudre-Eugenie» սպիտակ և վարդագոյն փոշի. Գ. արկղիկի, վրձինով 1 ր. 50 կ. առանց վրձինի 1 ր. 20 կ.

Մազերի ներկը երեք գոյնի. սև, շագանակագոյն և բաց-շէկ. Գ. արկղիկի 3 ր. Ներկը «Բիսգումանի» գործարանի։

Գլխաւոր պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվում Վ. Գրիվնակի դեղատան ապրանքների մագազինում, «Լօնդօն» հիւրանոցի տակ, Զուբալովի տանը։ 58—100

Въ редакціи газеты „МШАКЪ“ продаются слѣдующія брошюры:

1) „Экономическое Положеніе Турецкихъ Армянъ“, публич. лекція Д—ра Григорія Арцруни, переводъ съ армянскаго А. Аракелянца. Цѣна 25 коп.

2) Die Oekonomische lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amirchanjanz. Preis 25 kop.

3) Die Hungersnoth in Türkisch-Armenien, ein Vortrag von Dr. Grigor Arzruni übersetzt von Amirchanjanz. Preis 20 kop.

Иногородные, желающіе получить брошюры, благоволятъ присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру.

Адресъ. Тифлисъ, Редакція „Мшакъ“, или Tiflis, Redaction „Mschak“.

17—25

ԿՕՖԷ ՄՕԿԿՕ

Ս. ՍԻՈՒ և ԸՆԿ.

(Ц. 4907) 21—50 (2)

Дозволено цензурою, Тифлисъ 25 Іюля 1886 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовская у. д. каз.